Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոն

«Հանրակրթական դպրոցների ուսուցիչների և ուսուցչի օգնականների դասավանդման հմտությունների զարգացման ապահովում» ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ Վաղարշապատի Զորավար Անդրանիկի անվան N 12 հիմնական դպրոց

Թեմա՝ Ուսուցման ժամանակակից մեթոդների կիրառումը մայրենիի դասին, որպես հայրենասիրական դաստիարակության միջոց:

Վերապատրաստող, մենթոր՝ Փիրուզա Սարգսյան

Դասվար՝ Հովսեփյան Արմինե

Վաղարշապատ 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն ……

Թեմա 1

Հայրենասիրական դաստիարակության դերն ու նշանակությունը տարրական դասարաններում……

Թեմա 2

Մայրենիի դասին կիրառվող ժամանակակից մեթոդները.....

Եզրակացություն ……

Հավելված .....

Գրականություն.....

Ներածություն

Հետազոտության արդիականությունը: Հայրենասիրությունը սկսվում է հայրենաճանաչությունից, քանի որ ամեն հայի պարտքն է ճանաչել և սիրել իր հայրենիքը: Հայրենասիրության և հայրենաճանաչության հիմքը դրվում է նախ ընտանիքում, ապա իր մարմնավորումն է ստանում դպրոցում: Տարրական դասարանից սկսած աշակերտը ծանոթանում է հայ մեծերի գործունեությանը: Գրագիտության ամեն մի նոր քայլը աշակերտին ավելի է մոտեցնում իր պատմության փառավոր էջերի բացահայտմանն ու յուրացմանը: Սակայն փառահեղ էջերից առավել կարևոր և արդիական է այսօր, որպեսզի աշակերտը լավ յուրացնի և խորացնի պատմության նաև հակառակ կողմը՝ այն կողմը, որի հետևանքները սև գույնով ներկեցին հայոց պատմության էջերը՝ դառնալով այսօր ևս ոչ միայն մարդկային այլ նաև տարածքային կորուստների պատճառ: Հայրենասիրության հետ մեկտեղ անհրաժեշտ է աշակերտների մոտ ձևավորել և զարգացնել պահանջատեր լինելու իրավունքը, որն էլ հիմք կդառնա ապագայում հզոր պետություն ունենալուն:

Հետազոտման նպատակը և խնդիրները: Սույն հետազոտության նպատակն է բացահայտել հայրենասիրության գաղափարը, դաստիարակել ազատ, խելացի, մեր հայրենիքին արժանի զավակներ: Սիրել տալ մեր հողը, երկիրը, քաղաքը, տունը: Այբբենարանից սկսած երեխան համառոտ պատմությունների միջոցով ծանոթանում է Մեսրոպ Մաշտոցի, Հայկի, Սասունցի Դավթի հետ, իսկ նկարների միջոցով ճանաչում Գարեգին Նժդեհին, զորավար Անդրանիկին, Սպարապետ Դրոյին, որոնց մասին հետագայում խորքային գիտելիքներ է ձեռք բերում բարձր դասարաններում: Միջառարկայական կապեր ենք ստեղծել մյուս առարկաների հետ: Հայրենասիրության գաղափարը կապել ենք մաթեմատիկայի, կերպարվեստի, շրջակա աշխարհի, երաժշտության և մյուս առարկաների հետ:

Աշակերտների կողմից հայրենասիրության գաղափարը վեր հանելու և այն գերագույն արժեք դարձնելու համար առանձնացրել եմ հետևյալ հարցերը.

1. Ինչո՞ւ աշակերտների մոտ ձևավորել հենց հայրենասիրական դաստիարակություն:

2. Ինչո՞վ է կարևորվում հայրենասիրության սերմանումը սկսել հենց տարրական դասարաններից:

Սույն հետազոտության մեջ առանձնացրել ենք հետևյալ խնդիրները

1. Ներկայացնել մայրենիի դասագրքերում տեղ գտած հայ մեծերի, հայկական ավանդույթների, կրոնի, պատմական հուշարձանների կապը հայրենասիրության հետ։

2. Մեկնաբանել և հետաքրքիր պատմություններով ավելի խթանել աշակերտների հետաքրքրությունը, արթնացնել սերը հայրենիքի նկատմամբ, որոնք ավելի ակնառու կդառնան էքսկուրսիաների միջոցով։

3. Ձևավորել արժեհամակարգ, որտեղ աշակերտը այլ տեսանկյունից կնայի իր երկրի պատմությանը, հերոսական անցյալին, նաև սովորույթներին և ավանդույթներին՝ պատասխանատվության զգացումով կլցվի իր երկրի, հայրենիքի, վաղվա օրվա հանդեպ։

4. Վերլուծել տուն-հայրենիք-լեզու գաղափարը, մայրենի լեզու- հայրենի տուն, ընտանիք- հայրենիք, ծնող-հայրենիք կապը։

Գործնական և տեսական նշանակությունը։ Հետազոտությունը՝ «Մայրենիի դասերը որպես հայրենասիրական դաստիարակության միջոց։ Դրա դասավանդման առանձնահատկությունները» գործնական նշանակություն ունի տարրական դասարաններում դասավանդող ուսուցչի համար։ Հետազոտությունը տեսական նշանակություն ունի հիմնախնդրի շուրջ հետազոտություններ կատարողների համար։

1. Ուսումնասիրություն։ Կուսումնասիրենք Մայրենիի դասագրքում 1-4 տեղ գտած հայրենասիրությանը վերաբերող թեմաները, բովանդակությունը, կծանոթանանք՝ դասագրքային նյութի ընդգրկվածությանը։

2. Համեմատություն, վերլուծություն։ Թեման կուսուցանենք համեմատության մեթոդով.կհամադրենք, կհակադրենք դրական և բացասական հերոսներին, կուսումնասիրենք նրանց հերոսական արարքները, համեմատական վերլուծությունների կենթարկենք պատմական իրադարձությունները։

Հետազոտության կառուցվածքը և ծավալը։ Սույն աշխատանքը բաղկացած է ներածությունից, երկու թեմայից, եզրակացությունից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից։

Թեմա 1

1.1 Հայրենասիրական դաստիարակության դերն ու նշանակությունը

«Հայրենասիրություն» բառը նշանակում է հայրենիքը սիրող: Մարդու հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորվում տվյալ մարդու (դպրոցականի)՝ դեպի իր հայրենիքը ունեցած սիրո մեջ: Սերը ոչ միայն հայրենիքի նկատմամբ է, այլ նաև հայրենիքում ապրող ժողովրդի նկատմամբ: Երբ ասում ենք հայրենիք, ապա առաջին հերթին հասկանում ենք հայրենիքում ապրող ժողովուրդը:

Հայրենասիրությունը երեխաների մեջ պետք է սերմանել մանկությունից՝ վերածելով արժեհամակարգի: Յուրաքանչյուր երեխա պետք է փոքրուց ճանաչի իր հայրենիքը, իր հերոսներին ու պիտի ցանկանա նմանվել նրանց, որովհետև չկա դաստիարակության ավելի լավ միջոց, քան լավագույն օրինակը: Հայոց պատմության էջերը լի են բազմաթիվ օրինակներով, քանզի մեր հերոսական անցյալը վկայում է այն, որ բոլոր ժամանակաշրջաններում հայը միշտ էլ պայքարել և կռիվ է տվել իր մայր հողի համար՝ ոմանք զենքը ձեռքին, ոմանք մտքի ու ստեղծագործ ուժի, ոմանք աշխատասիրության շնորհիվ կարողացել են հայ մնալ ու պահել իրենց մի բուռ հայրենիքը՝ շրջապատված բազում թշնամիներով: Ինչպես հայտնի է հայրենասիրական դաստարակությունը սերն է սեփական հայրենիքի նկատմամբ: Յուրաքանչյուր երեխա դեռ մանկապարտեզից իր մեջ կրում է հայրենասիրության ծիլերը, որոնք խորանում և արմատավորվում է դպրոցում: Վաղ մանկությունից սովորած դասերը երբեք չեն մոռացվում. ազգային երգերն ու պարերը սովորեցնում են ճիշտ սիրել հող հայրենին, ճիշտ ճանաչել սեփական տեսակն ու դառնալ ազգի զինվոր՝ սահման պահող և մշակույթ պահպանող: Աշակերտներից յուրաքանչյուրի գիտակցության մեջ պետք է մտցնել և ամրապնդել այն փաստը, որ մենք՝ հայերս, մեր բնօրրանը հաճախ ենք կապում մայր բառի հետ և այն անվանում մայր հայրենիք, մայրենի լեզու: «Սակավ սրբություններ չունի մարդ արարածը, բայց, անկասկած, նրա սրբության սրբոցը մայրն է, այս պատճառով էլ ամենանվիրական բաները առնչում են մորը՝ Հայրենիքը կոչելով «մայր», լեզուն՝ «մայրենի» Ճիշտ է, պատահում են նաև «մոր ծիծ կտրողներ» բայց ընդհանրապես մայրը հարուցել ու հարուցում է անշահադետ հոգածություն, բոլորանվեր խնամք, բնաբուխ փայփայանք: Իբրև մոր նայել և իբրև մոր են պահել իրենց մայրենի լեզուն հայ ժողովրդի մայրասեր ու մայրախնամ զավակները՝ սկսած Մաշտոցից ու մեր առաջին թարգմանիչներից մինչև Նարեկացի ու Շնորհալի, Դուրյան ու Ռաֆֆի, Վարուժան ու Չարենց» :

Ուսուցիչը պահպանելով եռաստիճան համակարգը՝ սովորեցնել, դաստիարակել, զարգացնել, աշակերտներին ներգրավում է հասարակական կյանք և նրան դարձնում հայրենիքի լիիրավ պաշտպան: Հայրենասիրություն սերմանելը աշակերտների մոտ, հատկապես տղաների դեպքում, ունի հոգեբանական կողմ: Այսինքն, անհրաժեշտ է բարձրացնել աշակերտների ոչ միայն մարտունակ ու քաջ ոգին, այլև նպաստել հոգեբանական պատրաստվածությանը: Որովհետև ինչպես ֆիդայիներն էին երդվում, որ իրենց «բարձը պետք է լինի Հայաստանի լեռները, իսկ ամենամեծ բաղձանքը՝ Հայաստանի համար մեռնելը», այնպես էլ այսօր մեր զինվորներն են երդվում, որ անձնվիրաբար ծառայելու են Հայաստանի Հանրապետությանը: «Դաստիարակության կարևոր կողմերից է ազգային ինքնագիտակցության, ազգային պատկանելության խնդիրը, և հարկ է սովորողի գիտակցությանը հասցնել հայրենասերի բարձր կոչումը, հայրենիքի վեհ գաղափարը, և նախնիների փառավոր անցյալը, և ավելորդ չէ մեկ անգամ ևս փաստել, որ հայի հայրենասիրությունը խարսխված է դարավոր պատմության ակունքներում, նախնիների և նրանց անցած փառավոր ուղու և փորձի, ինչպես նաև մեր օրերի արցախյան պատերազմում թրծված ազատամարտիկների սխրանքի, անձնուրացության, անուրանալի կամքի, արժանավայել ապրելու, հողը և հարազատներին պաշտպանելու, հայրենիքը, ծնողին և երեխային աստվածացնելու ու անմահացնելու հիման վրա» : Ինչպես բոլոր ժամանակներում այնպես էլ այսօր հայը շարունակում է պայքարել իր հայրենի հողում ապրելու համար: Այսօր դպրոցի առջև ծառացած կարևորագույն խնդիրներից է դաստիարակել հայրենասեր սերունդ, քանզի արցախյան գոյապայքարի մարտահրավերները ավելի են կարևորում այսպիսի սերունդ ունենալու անհրաժեշտությունը: Այս հարցն ավելի սուր է ներկայանում մեր օրերում, քանզի այսօրվա աշխարհաքաղաքական զարգացումների կիզակետում հայտնված մեր պատմական հայրենիքի՝ Արցախի ապագան վտանգված է, իսկ վաղվա օրվա հայրենյաց սահմանի պաշտպանն այսօրվա դպրոցականն է ու նրա մեջ հայրենասիրություն սերմանող ուսուցիչը, ով իր անխոնջ աշխատանքով մատաղ սերնդի հոգում դնում է հայրենասիրության ծլարձակող սերմեր, վկան՝ Արցախի քառօրյա պատերազմը:

Հայրենասիրության սերմանումը երկարատև և շարունակական բնույթ կրող գործընթաց է, որը շարունակվում է մարդու ամբողջ գիտակցական կյանքում: Յուրաքանչյուր հայ պետք է գիտակցի, որ Հայաստանը պետք է սիրել ոչ թե գեղեցկության կամ հնության համար, այլ նրա հավերժության և հարազատության:

Հայրենասիրության գլխավոր գաղափարը այն է, որ պետք է սիրել հայրենիքը։ Եվ ինչպես Խաչատուր Աբովյանն է ասում. «Շունչդ տուր, հոգիդ, բայց քո հայրենիք մի՛ տար թշնամյաց»։

Թեմա 2

Մայրենիի դասին կիրառվող ժամանակակից մեթոդները

Մայրենիի ուսուցումը ճիշտ և նպատակաուղղված իրականացնելու համար անհրաժեշտ է որոշել յուրաքանչյուր թեմայի բովանդակությունն ու խնդիրները և նրա դերը պատմական ճանաչողության, մտածողության ու դաստիարակության գործում, ուշադրություն դարձնել նոր տեխնոլոգիաների կիրառման, մեթոդների ընտրության և դրանք ճիշտ կիրառելու վրա՝ առաջացնելով հետաքրքրություն աշակերտների մոտ՝ դասին ամբողջովին ներգրավվելու համար։ Մեթոդների իրականացումը երեխաների մոտ խթանում է հետաքրքրությունն առարկայի հանդեպ, ակտիվացնում է դասարանը, զարգացնում՝ որոնողական, ստեղծագործական կարողությունները, համագործակցային մեթոդներով աշխատելու ունակությունը, աշակերտների մոտ ապահովում է գիտելիքին հասնելու ճանապարհին գործուն մասնակցություն, ձևավորում է նրանց մոտ կարողություններ և հմտություններ, դարձնում նրանց գիտելիք ձեռքբերող և ակտիվ յուրացնող։ Յուրացված գիտելիքների հիման վրա աշակերտը կարողանում է արտահայտել սեփական կարծիքը, մեկնաբանել, վերլուծել այն՝ առաջարկելով իր մոտեցումը։ Կարևոր է դասի ժամանակ օգտագործել զննական պարագաներ՝ պաստառներ, նկարներ, տեսասահիկ, մակետներ, մուլյաժներ և այլն։

Մայրենիի դասերը որպես հայրենասիրական դաստիարակության միջոց դասավանդվում է հանրակրթական հիմնական դպրոցի 1–6-րդ դասարաններում՝ տարբերվելով նյութի ծավալով, բովանդակության ընդգրկվածությամբ, հաշվի առնելով երեխաների տարիքային առանձնահատկությունները։ Բավարար գիտելիքների հիման վրա կիրառում ենք տարբեր միջոցներ և ուսումնական հնարներ՝ նյութն ավելի հետաքրքիր և մատչելի, իսկ դասն ավելի արդյունավետ դարձնելու համար։ Մեթոդների օգնությամբ ուսուցիչը վեր է հանում աշակերտների ունեցած գիտելիքները տվյալ թեմայի շուրջ, քանի որ նոր գիտելիքներ ձեռք բերելու՝ աշակերտների հնարավորությունը մեծ մասամբ կախված է նրանց ունեցած նախնական գիտելիքների պաշարից, և «այն աշակերտները, որոնք ունեն գիտելիքների հարուստ պաշար, ավելի շատ բան կարող են վերցնել նոր ուսուցանվող նյութից», օրինակ՝ առաջին դասարանում երեխաները այբբենական շրջանում ծանոթանում

են «Սասունցի Դավիթ» էպոսի հետ, իսկ արդեն հաջորդ դասարաններում նրանք ծանոթանում են էպոսի տարբեր մշակումների հետ: Եվ հաշվի առնելով տարիքային առանձնահատկությունները տվյալ թեման ուսուցիչը կարող է ներկայացնել համակողմանի, կատարել վերլուծություններ, կապ ստեղծել անցյալի և ներկայի հետ, վեր հանել պատմական կերպարներ և դերային խաղի միջոցով իրականացնել ապրումակցում՝ տեղափոխելով տվյալ ժամանակաշրջան: Անհրաժեշտ է, որպեսզի աշակերտը հասկանա, որ էպոսը նաև սովորեցնում է միշտ ձեռքում պահել ինքնապաշտպանական սուրը՝ դրանով իսկ ապահովելով հայրենիքի խաղաղությունն ու բարգավաճումը:

Եթե առաջին և երկրորդ դասարաններում աշակերտները նախնական գիտելիքներ են ձեռք բերում էպոսի մասին, ապա երրորդ և չորրորդ դասարաններում ծանոթանում են էպոսի տարբեր մշակումներին: Չորրորդ դասարանում աստիճանաբար փոխվում է ուսուցման բովանդակությունը, աշակերտների ուսումնական գործունեության ձևերն ու եղանակները, ուսուցումը նոր ուղղություն է ստանում, որի դեպքում կարևորվում է խորքային գիտելիքների ստացումը՝ կարևորելով նրանց մտածական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործում նրանց գործուն մասնակցությունը, վերլուծական, համադրական կարողությունները: Չորրորդ դասարանում դասը դառնում է ավելի աշակերտակենտրոն, ուսուցիչը պատրաստի գիտելիքներ փոխանցողից ստանձնում է ուղղորդողի դեր՝ հնարավորություն տալով աշակերտների մոտ զարգացնելու քննադատական մտածողությունը, և ինքնուրույն վերլուծություններ կատարելու կարողությունը:

Հայրենասիրության դաստիարակության թեման պետք է ուսուցանվի բոլոր առարկաների բոլոր դասաժամերին: Բայց ավելի ակնառու և տեսանելի պետք է դառնա մայրենիի դասաժամերին՝ կապված ուսումնասիրվող թեմաների բազմազանության հետ:

«Սասունցի Դավիթ» էպոսը թեման անցնելիս ուսուցիչը կարող է կիրառել ***Մտագրոհ*** մեթոդ՝ պարզելով հարցերի թե ինչ են հիշում աշակերտները: Կարող է նաև կիրառել ***«հաստ» և «բարակ»*** աղյուսակը, որը ուղղված է գիտելիքների ստուգմանը և համապատասխան կարողությունների ու հմտությունների ձևավորմանը: Կարող է նախապես լրացնել «բարակ» հարցերի աղյուսակը՝ վեր հանելով նրանց գիտելիքները, որոնք ձեռք են բերվել նախորդ դասարաններում: Այնուհետև թեման յուրացնելուց հետո կլրացնեն «հաստ» հարցերի աղյուսակը՝ պարզաբանելով էպոսի տարբեր մշակումները (նույնը կարող է կիրառել նաև մյուս դասանյութերի դեպքում, օրինակ՝ երկրորդ դասարանում աշակերտները ծանոթանում

են աստղադիտարանի հետ, իսկ երրորդ դասարանում ուսումնասիրում են նյութ Վիկտոր Համբարձումյանի մասին)

Մեթոդ 1.

«բարակ» հարցեր	*«հաստ» հարցեր*
1. Ի՞նչ է էպոսը 2. Քանի՞ ճյուղից է այն բաղկացած 3. Ինչո՞ւ է կոչվում Սասնա ծռեր 4. Ի՞նչ է նշանակում ծուռ 5. Ո՞վ է ժողովուրդի սիրելի հերոսը	1. Ո՞վ է «Սասունցի Դավիթ» արձանի հեղինակը 2. Բացատրեք ի՞նչ է խորհրդանշում Դավթի արձանը։ 3. Բացատրեք ինչո՞ւ է այն կանգնեցված ջրի մեջ 4. Մեկնաբանեք ինչո՞ւ Դավիթը չկռվեց Մսրա Մելիքի զորքի դեմ 5. Բնութագրեք Մեծ Մհերին և Փոքր Մհերին

Մեթոդ 2.

Վենի դիագրամի միջոցով աշակերտները կարող են ներկայացնել Սասունցի Դավթի և Մսրա Մելիքի կերպարների նմանություններն ու տարբերությունները



Անդրադառնալով հայրենասիրությանը վերաբերվող մյուս թեմաներին կարող ենք **կիրառել Կանխագուշակումների աղյուսակ, Խառնված հերթականություն, Էստաֆետ, ԳՈՒՍ, Տ-աձև աղյուսակ, Մտքի քարտեզ, m-աձև աղյուսակ, Կիսատ նախադասություն** մեթոդները։

Մեթոդ 3.

Չորրորդ դասարանում ուսուցիչը «Հայաստանի յոթ և բյուր հրաշալիքները» թեման ուսումնասիրելիս կարող է կիրառել **ԳՈՒՍ** մեթոդը։ Այս մեթոդի օգնությամբ ուսուցիչը վեր կհանի աշակերտների ունեցած նախնական գիտելիքները Մեսրոպ Մաշտոցի, Հովհաննես Թումանյանի, Արամ Խաչատրյանի, Մարտիրոս Սարյանի, Երևանի, եկեղեցիների,

հուշարձանների և խաչքարերի մասին: Կքննարկեն թեմայի հետ կապված աշակերտների հետաքրքրությունները, իսկ վերջում կլրացնեն սովորել եմ աղյուսակը՝ ներկայացնելով սովորածը:

Գ	*ՈՒ*	*Ս*
Գիտեմ	*Ուզում եմ իմանալ*	*Սովորել եմ*

Մեթոդ 4.

Հայտնի մարդկանց կյանքն ու գործունեությունն ուսումնասիրելիս կարող ենք կիրառել նաև ***Կենսագրական աղյուսակը***: Օրինակ՝ Արամ Խաչատրյանի կենսագրությունը ուսումնասիրելիս աղյուսակը կունենա հետևյալ տեսքը

Տարեթիվ	*Իրադարձություն*
1903 թ.	Ծնունդ
1929 թ.	Գնեսինների անվան երաժշտության ուսումնարան
1939թ.	«Երջանկություն» բալետ
1942թ.	«Գայանե» բալետ
1954թ.	«Սպարտակ» բալետ
1978թ .	Մահ

Պատասխանները կլինեն բազմաթիվ , որոնք հենց գրելու ժամանակ ուսուցչի օգնությամբ կարող են պարզաբանվել և ճիշտ պատասխանին ուղղորդել ՝ առանց պարտադրանքի, հարգելով աշակերտի կարծիքը, նրա մեկնաբանությունը:

Մեթոդ 5. Ընդհանուր բաժինն ավարտելուց հետո ուսուցիչը կարող է կիրառել **Կիսատ նախադասություն** մեթոդը, որը բաղկացած է հետևյալ բաղադրիչներից

- Ես այսօր սովորեցի
- Ինձ զարմացրեց
- Այսօրվա դասի ամենաօգտակար բանը
- Ինձ հետաքրքրեց
- Ինձ ամենաշատը դուր եկավ
- Մի բան, որ չհասկացա

- Մի բան, որ կուզեի ավելին իմանալ
- Այս դասից հետո ես զգում եմ
- Այս դասին ավել կսովորեի եթե

Թեմայի ամփոփման ժամանակ կարելի է նաև կիրառել **Շրջագայություն պատկերասրահում** մեթոդը, որի ընթացքում երեխաները կներկայացնեն ձեռք բերված գիտելիքները: Կարելի է նաև ամփոփել փոքրիկ ցերեկույթի տեսքով՝ ներկայացնելով սովորածը: Օրինակ՝ երրորդ դասարանում դնելով նախագծային աշխատանք կատարելու հիմքերը երեխաները մեկամսյա ժամանակահատվածում կատարել են հետևյալ աշխատանքը՝

Իմ հայրենիքը Հայաստանն է

Նախագծային աշխատանք

Նպատակը՝ ծանոթացնել ՀՀ խորհրդանիշներին, պատմությանը, մշակույթին, նշանավոր իրադարձություններին , մարդկանց:

Երեխաները ներկայացրել են մեր երկիրը, տեղեկություններ փնտրել ու ներկայացրել դրանք, կարողացել են հաղորդակցվել անծանոթ մարդկանց հետ, գտնել են ն իրենց հուզող հարցերի պատասխանները:

Որի արդյունքում զարգացել է բանավոր խոսքը, ազատ հաղորդակցվելու, պատմելու կարողությունները:

Աշխատանքը կատարելու համար երեխաներին տրվել է 4 շաբաթ, այն ներկայացվել է նոյեմբերի 5-ին: Դասարանը բաժանվել է 5 խմբի՝

1. Վաղարշապատ - Էջմիածին
2. Հայաստանի խորհրդանիշները
3. Հայաստանի տեսարժան վայրերը -զբոսավարներ
4. Մշակույթ - արվեստաբաններ
5. Հայաստանի նշանավոր զավակները- պատմաբաններ

Ֆինանսիստներ, որոնք հաշվել են, որքան գումար է հարկավոր էքսկուրսիաներ կազմակեպելու համար: Եղել են թանգարաններում, պատկերասրահներում, ճշտել են մուտքի արժեքները և նեկայացրել վերջնահաշիվը:

Կազմակերպվել է էքսկուրսիա Զվարթնոց տաճար, Էջմիածնի պատմագրական թանգարան, Մաչանենց տուն, եկեղեցիներ:

Խմբերն աշխատել են ինքնուրույն, հարցազրույց են վերցրել Զվարթնոց թանգարանային արգելոցի տնօրենից: Զրուցել են Մաչանենց տան գեղարվեստական ղեկավարի, թատրոնի դերասանների հետ, հետևել են լավաշի թխման ընթացքին:

Բոլոր խմբերը պատրաստել են թեմատիկ պաստառներ՝ աշխատանքն ավելի հետաքրքիր ներկայացնելու համար, ինչպես նաև փոքրիկ հոլովակներ:

Մշակութաբանները պատրաստել էին փոքրիկ ցերեկույթ, որտեղ ներկայացրել են հայկական ժողովրդական երգն ու պարը, բանաստեղծություններ Հայաստանի մասին:

Զբոսավարները ներկայացրել էին իրենց նախընտրած ուղղությունը՝ նշելով ճանապարհին հանդիպող տեսարժան վայրերը, օրինակ՝ Գեղարդավանք – Չարենցի կամար, Գառնի հեթանոսական տաճար, Քարերի սիմֆոնիա:

Այսպիսով, աշակերտները ևս մեկ անգամ ապացուցեցին, որ հայրենիքը սիրում են ոչ թե նրա համար, որ մեծ է, այլ նրա համար, որ քոնն է: Այս խոսքերի ճշմարտացիությունը ակնհայտ երևաց «Հայաստանը մեր հայրենիքն է» խորագրով բաց դասի ընթացքում: Նրանք մեծ ոգևորությամբ ներկայացրեցին նաև հայկական մշակույթը՝ համեմելով այդ ամենը հայկական երգ ու պարով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով թեման հանգել ենք մի շարք եզրակացությունների

1. Աշակերտների մոտ հայրենասիրությունը ձևավորվում և զարգանում է վաղ տարիքից և այն որպես արժեհամակարգ ուղեկցվում է ամբողջ կյանքում: Յուրաքանչյուր աշակերտի մոտ պետք է ձևավորել այն գաղափարը, որ հայրենիքի պահպանման գործոնը հայրենասիրությունն է, որի գաղափարը դարերի ընթացքում հարստանում և սերնդից սերունդ է փոխանցվում:

2. Անկախ տարիքային առանձնահատկություններից աշակերտները պետք է գիտակցեն, որ հայրենիք ունենալը հերոսական պայքարի արդյունք է, որն առանց հայրենասիրության հնարավոր չէ:

3. Հայրենասիրության սերմանումը երկարատև և շարունակական բնույթ կրող գործընթաց է, որը շարունակվում է մարդու ամբողջ գիտակցական կյանքում: Յուրաքանչյուր հայ պետք է գիտակցի, որ Հայաստանը պետք է սիրել ոչ թե գեղեցկության կամ հնության համար, այլ նրա հավերժության և հարատևության:

4. Ցանկացած տարիքում (տարրական, միջին, ավագ դպրոցական տարիք) թեմայի դասավանդման շրջանում սովորողների մոտ գիտելիքների, կարողությունների ու հմտությունների զարգացում կարելի է ապահովել կիրառելով տարբեր մեթոդներ, որը հնարավորություն է տալիս ապահովել սովորողների ուշադրությունը:

5. Տվյալ թեմայի շրջանակներում դասի կրթական, զարգացնող և դաստիարակչական նպատակների հետ միասին մեծ տեղ պետք է հատկացնել սովորողների մոտ հայրենասիրական դաստիարակության ձևավորմանը:

6. Նորագույն մեթոդներով դասավանդումը հնարավորություն է տալիս նյութն առավել հետաքրքիր, բովանդակալից ու պատկերավոր դարձնել: Ուսուցման արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է կիրառել ուսուցման ժամանակակից մանակավարժական տեխնոլոգիաներ՝ դրանցում ընդգրկելով ՏՀՏ-ների ժամանակակից ինտերակտիվ մեթոդների և միջառարկայական կապերի ընձեռած հնարավորությունները:

7. Կարևոր է ապահովել միջառարկայական կապը, որը կնպաստի աշակերտների կողմից նյութի բազմակողմանի ընկալմանը և յուրացմանը:

8. Միջառարկայական կապի տեսակներից՝ մայրենիի, գրականության և պատմության կապը նպաստում է պատմական նյութի խորքային իմացությանը, դասը դարձնում բովանդակալից և հետաքրքիր: Իսկ մաթեմատիկայի հետ կապը թույլ է տալիս աշակերտներին հիշել տարեթվերը, հեշտ հաշվել իրադարձությունների տևողությունը: Իսկ երաժշտության և կերպարվեստի հետ կապը նպաստում է ծանոթացմանը ազգային արժեքներին և մշակույթին՝ ծանոթանում են հայ կոմպոզիտորների, նկարիչների և նրանց ստեղծագործությունների հետ, սովորում են հայրենասիրական երգեր, սովորում են սիրել և նկատել հայրենի բնաշխարհի գեղեցկությունը և պաշտպանել հայրենի հողը:

9. Տարրական դպրոցն ավարտելուց աշակերտը պետք է իմանա, որ հայրենիքը միայն հող ու ջուր չէ,այն արժանի է և ենթակա է պաշտպանության իր զավակների կողմից: Հայրենիքը մի մեծ տուն է, ընտանիք, որի համար մարդը պետք է աշխատի և որը պետք է ծաղկեցնի, ղեկավարի և դարձնի բարեկեցիկ և արժանավայել ապրելու տեղ: Հայրենիքը պիտի լինի այն վայրը, որտեղ ապրելը յուրաքանչյուր հայի համար պատիվ պիտի լինի:

10. Ուսուցման հաջորդ մակարդակներում աշակերտի մոտ պետք է ձևավորված լինի այն համոզմունքը, որ ինքը նույնպես հայրենիքի մի մասն է և հանդիսանում է հայրենիքը պաշտպանողն ու ծաղկեցնողը:

Այսպիսով, հանրակրթական դպրոցում հայրենասիրական դաստիարակությունը պետք է տարվի ոչ միայն մայրենիի դասերին, այլև արտադասարանական աշխատանքներով՝ միջոցառումներով, էքսկուրսիաներով, հայրենաճանաչությամբ:

5 քայլով դասի պլան

Առարկա՝ Մայրենի

Դասարան՝ 2

Դասի թեմա՝ Հայոց բանակ

Ուսուցիչ՝ Հովսեփյան Արմինե

Դասի նպատակը ՝ Ձևավորել սովորողների Հայրենասիրական գիտակցությունը, արժեքային համակարգը, բարոյական որակները որպես քաղաքացու

Ճանաչել.

Սեփական ազգի դյութազունների (Հայկ Նահապետ, Արգիշտի, Տիգրան Մեծ, Վարդան Մամիկոնյան, Ա. Օզանյան, Մոնթե) սխրանքները, որոնց շնորհիվ դիմակայել ենք մոլեգնող արհավիրքների ու առ այսօր կանգուն ենք մնացել:

Կարևորել ազգային բանակի դերը մեր լինելիության գործում:

Անհրաժեշտ նյութեր ՝ հանրագիտարան, գրքեր, նկարներ, բառարան, հայրենիքի և նրա հերոսների մասին երգերի բառեր և ձայնագրություններ, ներկեր, մատիտներ, սոսինձ, մկրատ և այլն:

1 Դասի սկիզբ

Բանավոր ներկայացնել դասանյութի նախաբանը: Ունենալով հայրենիք, լեզու, ազատ ապրելու ստեղծագործելու հնարավորություն՝ մենք պարտավոր ենք մարդկանց, ովքեր ոչինչ չեն խնայել դրա համար:

2 Նոր նյութի հաղորդում

Դիտել տեսանյութը ճանաչել հայրենիքի հերոսներին, կատարել գրառումներ, որպեսզի այն օգտագործել ինքնուրույն աշխատանքի փուլում

https://youtube.com/watch?v=cA9k5j70yVI&feature=share

Դասանյութի համապատասխան հատվածների ընթերցում խմբերի կողմից:

Յուրաքանչյուր խումբ ընթերցում է դասանյութի համապատասխան հատվածը, քննարկում, յուրացնում է բառերը և բովանդակությունը:

Ֆիզկուլտ դադար

Կերգեն << իմ անունը հայ է >> երգը, կդիտեն տեսահոլովակը

https://youtu.be/02cmvRwpDjA

3 Ուղղորդված աշխատանք

Դասարանը բաժանում ենք 6 խմբի ՝

- Հայկ Նահապետ;
- Արգիշգի;
- Տիգրան Մեծ;
- Վարդան Մամիկոնյան;
- Սարդարապատ;
- Արցախ:

Յուրաքանչյուր խումբ ընթերցածից դուրս է բերում հենակետային բառերն ու արտահայտությունները, անունները, որոնք տեղ են գտնելու պաստառի վրա և բնութագրելու են հերոսներին : Ընտրում են նկարներ կամ որոշում են ինչ են նկարելու:

4 Ինքնուրույն աշխատանք

1. Ո՞վ է հայ ժողովրդի նախահայրը

_____

2.Ո՞ր թագավորն է կառուցել Էրեբունի- Երևանը:

_____

3.Ո՞ր թագավորի ժամանակ է Հայաստանը շատ մեծ և հզոր եղել:

_____

4. Որտե՞ղ է գտնվում Ստեփանակերտ քաղաքը:

_____

5. Ո՞ր հուշահամալիրն է սա:

_____

6. Ո՞ր զորավարն է իր փոքրաթիվ զորքով կռվել թշնամու դեմ:

5 Դասի ավարտը

Գրքի ստեղծում։ Խմբերը աշխատանքները ներկայացնելուց հետո բոլոր պաստառները միավորում են իրար։

Գնահատում – ձևավորող, ըստ սանդղակի

1. Սեփական դիրքորոշում հայտնելը
2. Պասիվ մասնակցին քննարկման մեջ ներքաշելը
3. Անցած թեմաներից օրինակներ բերելը
4. Համագործակցելը
5. Կարգապահ լինելը